Արձանագրություն N 2

«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/47» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12.02.2020 թ.
ժամ՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Չիլինգարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Մկրտչյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ռ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան

1. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/47» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Կ. Չիլինգարյան)

1.1 «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/47» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

	Մասնակիցների անվանումները	ՀՎՀՀ
1	«Բաս Վոյաժ» ՍՊԸ	07619137
2	«ԷԼԻՏԲԱՍ» ՍՊԸ	01242623

2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Կ. Չիլինգարյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները	
			«Բաս Վոյաժ» ՍՊԸ	«ԷԼԻՏԲԱՍ» ՍՊԸ
			Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ
1	«սոցիալապես անապահով ընտանիքներին տոն և հիշատակի օրերին աջակցություն» ծրագրի շրջանակներում տրանսպորտային միջոցների վարձակալություն (ավտոբուս)	1 500 000	2 085 000	9000 000
2	«Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն» ծրագրի շրջանակներում տրանսպորտային միջոցների վարձակալություն (ավտոբուս)	1 500 000	2 085 000	9000 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Կ. Չիլինգարյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման մասին

(Կ. Չիլինգարյան)

4.1 Գնանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների,**

աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա. որոշեց նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2020 թվականի **փետրվարի 18-ին ժամը 11:00-ին**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում բանակցությունների վերջնաժամկետ սահմանելով 15 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Չիլինգարյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 18-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝		Կ. Չիլինգարյան
Անդամներ՝		Օ. Մկրտչյան
		Ա. Սարգսյան
		Ա. Հովհաննիսյան
		Ռ. Սարգսյան
Համակարգող՝		Ա. Ներսիսյան